գայցեն Զ եկեղեցոյ արքն, եւ ամենեքեան մի՛ խօսս արասցեն, կրկին աւիրի բանն. աղաչանօք եւ պաղատանօք խաբանեցին զայս։ Եւ օրս Դշի բերին զնա և բազում նախատինս և արհամարհանք տվեալ վարդապետն նորա եւ թքեալ[1]) ծեծեալ թէ Քանի՛ քանի զայս գործս գործես. դու չէի՞ր այսպէս եւ այնպէս առնողն[2]). յորմէհետէ արարեալ էր զչարութիւնն։ Զայնոսիկ զամենայն առաջի նորա եդեալ առաջի ժողովրդեան իւր, և յետին բանն պատուիրեալ թէ Զաղաւնին թո՛ղ հանէ ի տանէ. և նա ասացեալ թէ Իմ չէ աղաւնին. եւ վարդապետն ասացեալ՝ Առանց քո կամացն ոչ կարէ որդին քո պահել աղաւնի։ Եւ ժողովուրդքն ամենայն ի մի խօսս եկեալ, բազում աղաչանս և պաղատանս արարեալ վարդապետին թէ Թո՛ղ հանէ ի տանէն. եւս եւ Սէֆէր պալին՝ որդի իրիցու, նա ի յոտս անկեալ վարդապետին թէ Խնայեա՛ յալիսն իմ։ Եւ յետ բազում բանից հազիւ զմիտս հաճեցեալ վարդապետին, եւ ելեալ տայ զարձակումն։ Եւ ապա ձայնեն զԹըլթըլն, քանզի Իպրահիմ Չէլէպին էր միջնորդ բանիս, եւ եղեւ այս կամաւ մերայնոցս, թէ ոչ՝ հնար ոչ գոյր փրկութեան նոցա ըստ չարեաց նոցա։ Եւ զայս խորհեցան թէ Դուցէ մի և՛ս չար ոչ ծնուցանեն. եւ յառաջագոյն պատուիրեցին զի մի բերցեն ընդ ժողովրդեանն զԹըլթըլն և զՊարմախսուզն եւ զայլ չարսն, զի մի և՛ս բանք նոցա աւերեսցի։ Եւ ապա ձայնեցին զԹըլթըլն, եւ բազում բանս պատուիրեաց նորա թէ Դու մի՛ այլ կամ աթոռակալութեան կամ երեսփոխանութեան մէջն խառնիս, և կամ խառնիս[3])՝ այնուհետև զքեզ անլուծանելի կապանօք կու կապեմք յերկինս և յերկրի։ Եւ նա ասէ թէ Լինի թէ մի վարդապետ գայցէ և հարկիւ մու-

1) թք. 2) առնողքն. 3) խառնես.